Ուրբաթ, 21 հունվարի 2011թ.

Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 6 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի Պ. Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի առդիո-վիզուալ սրահի վերանորոգում», «Երևանի Պ. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի մասնակի կահավորում», «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ գյուղի ագրոտեխնիկական բազայի համար գյուղտեխնիկայի ներմուծում» և «Ստեփանակերտի ջրամատակարարման համակարգի 10-րդ և 11-րդ գոտիների բարելավման նախագծման փարձաքննություն» ծրագրերը.

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից իրականացվող «Նոր Նորքի «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ի առաջին հարկի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության ծրագիրը.

Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2011-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառույցի պահպանում և հետագա զարգացման աջակցություն» ծրագիրը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: